ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 8-րդ մասի 15-րդ կետի, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ՝ Պալատ)** կանոնադրության 17.3-րդ կետի 27-րդ ենթակետի և Պալատի նախագահի 20.01.2020թ. թիվ 15-Լ որոշմամբ հաստատված Մարզերում համակարգում իրականացնելու մասին կարգի (**այսուհետ՝ Կարգ**) 4-րդ կետի և 7-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջներով,

հաշվի առնելով կորոնավիրուսային հիվանդությամբ (Covid-19) պայմանավորված Հայաստանի Հանրապետությունում կարանտին սահմանված լինելու հանգամանքը,

նկատի ունենալով Պալատի նախագահի տեղակալի առաջարկությունը և փաստաբան Լիանա Գրիգորյանի համաձայնությունը,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. Փաստաբան Լիանա Գրիգորյանին (արտոնագիր № 2377) նշանակել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզում Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի մարզային համակարգող՝ 8 (ութ) ամիս ժամկետով՝ մինչև 28.03.2022 թվականը:

2. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել փաստաբան Լիանա Գրիգորյանին, ինչպես նաև Սյունիքի մարզի փաստաբաններին:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝ Արա Զոհրաբյան

28 հուլիս 2021թ.
թիվ 128-Ա
ք. Երևան